

Մը անորոշ յօդին գործածութիւնն ու Ո՛Ր և է ժողովրդեան մի լեզու կապ ունի միշտ նոյն ազդին գաղափարաց և պատմութեան հետ. և կարելի չէ՝ որ ժամանակին ընթացից մէջ զանազան արտա- քին պատճառներէ ազդեցութիւն կրելով, այլ և այլ փոփոխութեանց ենթակայ չինի: Սոյն ազդեցութիւնս ահա ոչինչ նուազ կրեր է նաև մեր լեզուն (թէ զրաբարն և թէ աշխարհաբարն). ուստի և զատ անտի՝ որ ունեցեր է մերթ փոյլուն և մերթ մթին ժամանակիներ, մտեր են անոր մէջ այլառոյլ լեզուական խանգարմունք, օտարութի բացատրութեանց, ոճերու և բառերու գործածութիւնք. յորոց հարկն կը պահանջէ արդ զտել և յատակել լեզունիս, դարձունել զինքր իւր բնիկ պարզութեան և գեղեցկութեան. Սակայն եթէ շատ դժուարին է, չըսեմ անկարելի, զտել բոլորովին՝ դարձունել իւր առաջին պար- զութեան և կենդանացնել մեր գրաբար լեզուն, որ արդ գոյցես մի- այն լուրջ և ծանրակշիռ հեղինակութեանց մէջ կը գործածուի, զո- նեա զիւրին է ընել այն բանը մեր աշխարհաբար լեզուին. և պէտք է փոյթ ընենք առ այն, որ իւր աշխոյժ պատանեկութեան և գործօն հասակին մէջ լինելով, գրութեան ասպարէզին մէջ մեծ աքայլ յա- ռաջադիմելու հետ է: Ուստի հարկ է ամենայն ուշադրութիւն գար- ձունել առ այն, հարկ է՝ կարելի եղածին չափ՝ մաքրել զայն իւր խոր- թութիւններէն և խանգարումներէն, և սկսիլ ամենէն աւելի պար- զագոյններէն, ինչպէս կը համարուի անշուշտ մը յօդն կամ մասնի- կըն, որ գրութեանց մէջ այնքան յաճախեալ և սովորական գարձեր է:

Ոյս մը անորոշ յօդս, «որոյ պաշտօնն է անուան մի ընդհանուր միտքը մասնաւորի ամփոփել՝ առանց ո՞րն ըլլալը որոշելու՝», եթէ լաւ քննենք և դիտենք, միավանկ և ամենապարզ լինելով բառա- կան կազմութեամբ, յայտնի է թէ ուրիշ բառէ կամ արմատէ յա- ռաջ չէ եկած. և ուրիշ բան չէ, բայց միայն աղաւաղեալ զրութիւն կամ ընթերցումն մի գրաբար անորոշ յօդինչ, որ և հոմանիշ է յա- ճախ մէկ թուական անուան, ինչպէս կը հաստատէ զայս բազ- մահմոււա չեղինակն քննական գերականութեան. և սակայն գոր- ծածութեամբ և շատ անգամ նշանակութեամբ ևս կը տարբերի առա- ջինէն, վասնզի մէկն չկրնար երբեք իրրե յօդ գործածուիլ».

Եթէ այս մը անորոշ յօդին արտաքին բառական կազմութեան նայինք, պիտի տեսնենք որ հայկական լեզուին ընդհանուր օրէնքին դէմ է. վասն զի մեր լեզուին մէջ սովորաբար բառերուն վերջը ուժով

1. Փէն. Քերակ. Հ. Արս. Այտն. Բ. Էջ 24.

2. Հ. Արսէն բագրատունին կ'ըսէ Զարդացելոց Քերականութեան մէջ. Թէ իմն և ից ուրիշ բան չեն: բայց եթէ ի սազական մէջակ անունն վրան աւելցուած մը և ք առաքեն, որոց հետ այս կը համարէ և ռամպական մը և մըն անորոշ յօդեց (Զարդ- Քերակ. Էջ 74, թիւ 178):

3. Կոյն. 87 թիւ, ծանօթութիւն:

Հնչելով կամ շեշտելով, և ը ճայնաւորն այլ անշեշտ լինելով 'ի բնէ, կարելի չէ որ հայերէն լեզուին մէջ (թէ 'ի գրաբարի և թէ յաշխար-հաբարի) բառ մի ը գրով վերջանայ, իբրև բառին մասը կազմող, ևս առաւել միավանկ բառերու մէջ, ինչպէս է մը անորոշ յօդն :

Սոյն պատճառաւ է ահա, որ երբ ստանաւորի մէջ բառի մի վերջը կ'աւեցուի ը զիրն, իւր յաջորդ բառին կամ անդամին կը վերաբերի . ինչպէս,

**Յօդէր արտօ || սըր ցաւագին . Շար .**

Այն ինչ յերկիր արեգակն ըզչքնաղ դէմ || սըն ցուցցէ :

Եւ ըստէպ յապառած վէմ || սըն դեգերեալ զթեսըն փըշըն,

Եւ մըտադիւր ընդ բեռամ || բըն շընչասպառ փըշեն զոգիս . Վիր. Մշկ.

Իսկ եթէ մէկն առարկէ, թէ ինչպէս ապա յաշխարհաբարի յա-  
ճախ բառերուն վերջը ը զիրն կ'աւեցուի, դիւրին է պատասխանել.

Ա . Բառի մի վերջը կը գրուի ը, երբ կ'ուզենք զայն որոշել, որ զը-  
րաբարի մէջ ն կ'ըլլայ. ինչպէս Պետրոս և Պետրոսը (Պետրոսն) այ-  
նու կը տարբերին իրարմէ, որ առաջինն անորոշ է՝ որ և է մարդ  
Պետրոս անուամբ . իսկ երկրորդն՝ որոշեալէ միւս ամէն Պետրոսներէն :

Բ . Շատ անգամ աշխարհաբարի մէջ բառերու վերջը կը գրուի  
ը զիրն հնչման անուշութեան համար, երբ մի քանի բաղաձայնք ի-  
րարու ետև կը յաջորդեն :

Գ . Ինչպէս առաջ նշանակեցինք, թէպէտբառերուն վերջը կը դըտ-  
նուի ը զիրն, սակայն բառին մասն չէ, այլ պարզ յաւելուած մի,  
ինչպէս են զ, ի, յ, ց, առ նախղիրք՝ որք բառերուն առջնը դրուե-  
լով այլ և այլ հոլովներուն համեմատ անոնց իմաստը կը փոփոխին :

Դարձեալ պէտք է զիտել, որ այս մը մասնկան գործածութիւնն  
բոլորովին եկամուտ է մեր աշխարհաբար լեզուին մէջ, որոյ հետքն  
անգամ նշմարսիր որ և է հին աշխարհիկ գրութեանց և ձեռա-  
զրաց մէջ, ոչ յԱնսիղքն Անտիոքայ (Ժդ.դար), ոչ Վաստակոց զրոց  
մէջ (ԺԲ-ԺԳ.դար), և ոչ յԱթկեփորիկան, որք այլ և այլ գարուց և  
հեղինակութեանց հաւաքածոյք են: Դարձեալ ընթեցման մէջ ամե-  
նամեծ տգեղութիւն կը պատճառէ այն, մանաւանդ երբ գրութեանց  
մէջ ստէպ կրկնութիւն կ'ըլլայ, և ամէն մէկ նախադասութեանց  
վերջը՝ իբրու անհրաժեշտ հարկ կամ զարդ մի կ'աւեցուի. որով և  
դրեթէ միշտ նոյնայնգ վերջանալով, թէ ընթերցողաց և թէ լսո-  
ղաց տաղտկութիւն կը պատճառէ. ուր յաճախ առանց անոնց թէ  
շարադրութիւնն գեղեցիկ կ'ըլլայ, և թէ իմաստն աւելի պարզ և  
յստակ կ'ըմբռոնուի, Ռւստի որգան գեղեցիկ լինէր, եթէ ասկէ վերջը  
փոխանակ մը մասնկիս, որ ականջաց ևս ագեղ կը հնչէ, գործածէինք  
մեր բնիկ մի բառն, իբրու անորոշ յօդ, որ ի էր մեր հին ընտիր

գրութեանց մէջ։ իսկ իրու թուական անուն կարելի էր գործածել մէկ բառն, որ զուտ հայերէն էէ և շատ վայելուշ կերպով և յաճախ գործածուեր է ժդ դարէն 'ի վեր և անկէց ալ առաջ, որուն անթիւ են օրինակք։

Գալ անգամ համառօտիւ պիտի խօսինք, թէ մի ինչպէս կարելի և վայելուշ է գործածել աշխարհաբար գրութեանց մէջ։      \*\*\*

## ՀԻՆ ՔՆԱՐ

### ՏԱՂ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԻՆ

Տիրութիւնուր կոյս, մայր մարմնացելոյ Բանին,

Մաքուր կուսութեամբ ծընար տրղայ ըզՑէրն։

Տաճար հոգեւոր Խագաւորին Երկնից

Առաքեցելոյն 'ի Բայրական ծոցոյ։

Բարունին էից իմաստութիւնն Հօր՝

Առ քեզ խոնարիեալ շուշանափայլ հովիտ։

Բախական բայիւք Երգաբանեալ գոչեմք,

Հարմն Երկնից դըշխոյ, ուրախացիք բերկրեալ։

Ծընութիւն կուսից աւետաբեր կանանց,

Բաց լրւանելով զանիճաբեր Երկունսն։

Յօղ 'ի Հերմինէ վայր 'ի Սիրվն Խեղեալ,

Գեղմն իմանալի 'ի քեզ իցեալ Հոգւոյն։

Հինաւուրցն Աստուած՝ մանուկ 'ի քէն յայ ոնեալ։

Մորենի Վառեալ զեզեզ Մովսէսի տեսեալ։

Հիւսակ հոգեւոր եւ Խօթնարփեան շնորհաց,

Զահ Վառեալ լրւով Զաքարիաս ետես։

Փունց վարդից յեւեալ անուշանոտ հոգւով,

Խընկարեր հովիտ, զըմուռ, ստաշն, հալուէ,

Փառաց Խագաւորն քեւ 'ի տաճարն Եկեալ։

Սմէռն զընծայր քառասնօրեայ մանկամբն։

Բառակերպ աթոռ սուրբ Ճերունին գրտաւ

Ի գիրկս իւր բարձեալ զ'ի քերովքէս նրստեալն։

Քըրստոսի Փքրկչն ընդ Ճերունւոյն գոշեմք,

Արծակեալ եւ զմնզ 'ի կապանաց մեղաց։

1. Վաղուց հետէ կայր մին անօրու յոդ (փոխանակ մի մասնկին), որ հիմակ գաւառ պական է՝ բառերուն առաջը գրուելով. Մին բարի խորհուրդ, և այն. հին առմեն բէնի մեջ եսքը կը գրուեր. Խորհուրդ մին բարի. Տեղաց մին, և այլն. (Քննակ. Քեր. էջ 25):

2. Բացարձակ թուականներն հին ռամերենի մէջ ԺԱ. Դարէն կը սկսին հիմա կուան ձեն առուուլ, իւ ըպէս Մէկ (գր. մի, միակ), և այլն. — ԺԱ. Դարէն եռցը մէկ կը գործածուի գոյականէ առաջ առնոլով ու անփոփոխ. (Քնն. Քերակ. էջ 33):